

**«Հայաստանի Հանրապետության կառավարության
2017 թվականի հոկտեմբերի 5-ի N1318-Ն որոշման
մեջ փոփոխություններ և լրացում կատարելու
մասին» Հայաստանի Հանրապետության
կառավարության որոշման նախագիծ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

..... 2019 թվականի N - Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N1318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ-դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգն ու հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու մասին» N1318-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումը՝

- 1) Որոշման N1 հավելվածի՝

ա. 5-րդ կետի 1-ին ենթակետի «Է» պարբերությունը շարադրել նոր խմբագրությամբ՝

«Է. SIM քարտով՝ նվազագույնը 3G կապուղիով վերադաս հարկային մարմնի տեղեկատվական համակարգին միանալու հնարավորություն, ինչպես նաև WIFI ցանցին և Ethernet-ին (համապատասխան փոխարկիչի միջոցով) միանալու հնարավորություն»,

բ. 7-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«7. ՀԴՄ սարքը քանդելու (պատյանը բացելու) դեպքում պետք է իրականացվի ֆիսկալային ռեժիմի անջատում, սարքի գաղտնագրման բանալիների ջնջում և ՀԴՄ սարքի պատյանը փակելու դեպքում առանց գաղտնագրման բանալիներ վերականգնող համապատասխան գործիքի հնարավոր չլինի գործարկել սարքը:»,

գ. 12-րդ կետի 9-րդ ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«9) տոկոսային կամ գումարային զեղչի հաշվարկ.»,

դ. 15-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«15. Ֆիսկալային հիշողության մեջ գրանցվում է հետևյալ տեղեկատվությունը (ֆիսկալային տվյալներ)՝

Գրառման տեսակը	Նկարագրություն	Ձևաչափ
ՀԴՄ գրանցում	Գրանցման ժամը unix timestamp տեսքով	r:<time>, <tin>, <crn>, <time>
ՀԴՄ գրանցում	ՀԴՄ-ն կիրառող հարկ վճարողի հաշվառման համարը	<tin>
	ՀԴՄ-ի գրանցման համարը	<crn>
	ՀԴՄ գործարանային համարը	<serial>
ՀԴՄ ապաակտիվացում	ՀԴՄ ապաակտիվացման ժամը unix timestamp տեսքով	c:<time>,<tin>,<crn>,<serial>
ՀԴՄ ապաակտիվացում	ՀԴՄ-ն կիրառող հարկ վճարողի հաշվառման համարը	<tin>
	ՀԴՄ գրանցման համարը	<crn>
	ՀԴՄ գործարանային համարը	<serial>
Բաժնի ստեղծում	Բաժնի ստեղծման ժամը unix timestamp տեսքով	nd:<time>,<departmentId>
Բաժնի ստեղծում	Տվյալ բաժնի համարը	<time>
	Հարկման տեսակի	<departmentId>
	Նույնականացման համարը	<taxMode>
ՀԴՄ վաճառքի կտրոնի տպում	ՀԴՄ վաճառքի կտրոնի տպման ժամը unix timestamp տեսքով	p:<time>, <id>, <lottery-info>]
ՀԴՄ վաճառքի կտրոնի տպում	ՀԴՄ կտրոնի համարը	<time>
	ՀԴՄ կտրոնի ֆիսկալ համարը	<id>
	{<dId>:<totalWithTax>:<tax>}	<lottery-info>
	յուրաքանչյուր բաժնի համար, բաժանված ստորակետներով	<receipt-info>
	Բաժնի նույնականացման համարը	<dId>
	Ընդհանուր գումարը տվյալ	<totalWithTax>

	բաժնուժ ներառյալ ԱԱՀ Ընդհանուր ԱԱՀ գումարը տվյալ բաժնուժ	<tax>
Կտրոնի վերադարձ Կտրոնի վերադարձ	Կտրոնի տպման ժամը unix timestamp տեսքով	p:<time>, <id>, <crn>, <time>
	Վերադարձվող կտրոնի համարը	<id>
	Վերադարձի կտրոնի համարը	<tin>
	ՀԴՄ գրանցման համար	<crn>
Համաժամանակեցում Համաժամանակեցում	Համաժամանակեցման ժամը unix timestamp տեսքով	s:<time>, <status> <time>
	1- եթե համաժամանակեցումը հաջողվել է	<status>
	0- եթե համաժամանակեցումը չի հաջողվել	

2) Որոշման N3 հավելվածի՝

ա. 15-րդ կետում «որև» բառից հետո լրացնել «առավելագույնը 3 ժամվա ընթացքում» բառերը,

բ. 16-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ՝

«16. Սպասարկման կենտրոնը իրավասու ղեկավար անձի կողմից ՀԴՄ-ի անսարքության մասին տեղեկանալուց հետո Երևան քաղաքում 24 ժամվա ընթացքում, իսկ մարզերում 72 ժամվա ընթացքում ստուգում է անսարք ՀԴՄ-ն և անհրաժեշտության դեպքում ՀԴՄ կիրառող կազմակերպության ղեկավարի կամ պատասխանատու անձի հետ կազմում է ՀԴՄ-ն անսարք լինելու վերաբերյալ ակտ: ՀԴՄ կիրառողի պահանջով սպասարկման կենտրոնը Երևան քաղաքում 24 ժամվա ընթացքում, իսկ մարզերում 72 ժամվա ընթացքում ՀԴՄ կիրառողին տրամադրում է ժամանակավոր օգտագործման ՀԴՄ վերանորոգման աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, իսկ ՀԴՄ սարքի վերանորոգման անհնարինության մասին ակտ կազմելուց հետո՝ առավելագույնը 10 աշխատանքային օր ժամկետով:»,

գ. 20-րդ կետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: